# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

## Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՇՔԱՆՇԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

*1957 թվականի սեպտեմբերի 25 թվակիր Հայրապետական կոնդակով, Եգիպտահայ թեմի բարեխնամ առաջնորդ* գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի *միջնորդությամբ, իրենց ազգային-եկեղեցական բարի գործերի համար,* Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակուռ ոսկյա շքանշանով *պարգևատրվել են Մայր Աթոռի հետևյալ հարազատ զավակները.*

*Մեծահարգ տիար ԹՈՐՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆ, Խարթում.*

*Մեծահարգ տիար ՀԱԿՈԲ ՍԵՖԵՐՅԱՆ, Խարթում.*

*Մեծահարգ տիար ՍԱՐԳԻՍ ԻԶՄԻՐԼՅԱՆ, Սուդան.*

*Մեծահարգ տիար ԳՐԻԳՈՐ ՊՈՏՈՒՐՅԱՆ, Սուդան.*

*Մեծահարգ տիար ՊԵՐՃ ԲԱԲԱՅԱՆ, Ադդիս-Աբեբա.*

*Մեծահարգ տիար ՄԱՐՏԻՐՈՍ ՏԱՐԱԳՃՅԱՆ, Ադդիս-Աբեբա։*

*Վեհափառ Հայրապետի հոկտեմբերի 6 թվակիր կոնդակով,* Թեհրանի հայոց թեմական խորհրդի *միջնորդությամբ՝ մեծահարգ տիար ՄԱՐԳԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ, Թեհրան։*

*Վեհափառ Հայրապետի նոյեմբերի 25 թվակիր սրբատառ կոնդակով, Կոստանդնուպոլսի* ամենապատիվ Տ. Գարեգին պատրիարքի *միջնորդությամբ՝ ազնվաշուք տիար ԺՈԶԵ ԱԶԵՐԵԴՈ ԲԵՐԴԻԿԱՈ, նախագահ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության, Լիսաբոն։*

Գերապատիվ Տ. Շնորհ եպիսկոպոս Գալուստյանի *միջնորդությամբ՝ մեծահարգ տիար ՋԱՆ և ազնվափայլ տիկին ՄԵՐԻ ՔՅՈՒՐՔՃՅԱՆՆԵՐ, Ազգին և Եկեղեցուն ծառայելու բարի և աստվածահաճո գործերի համար։*

*Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի բարեխնամ առաջնորդ* գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի *միջնորդությամբ՝*

*Մեծահարգ տիար ՀԱՅԿ ԳԱՎՈՒԳՃՅԱՆ, Նյու-Յորք.*

*Մեծահարգ տիար ՀՄԱՅԱԿ ՀԱԲԵՇՅԱՆ (Բ կարգի), Բոստոն.*

*Մեծահարգ տիար ՏԻԳՐԱՆ ՊՈՅԱՃՅԱՆ (Բ կարգի), Ուոտերտաուն։*

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿ

*1957 թվականի սեպտեմբերի 25-ին, Եգիպտահայ թեմի բարեխնամ առաջնորդ* գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի *միջնորդությամբ, հայրապետական օրհնության սրբատառ կոնդակի է արժանացել, իր եկեղեցաշեն և բարեսիրական գործերի համար, ազնվափայլ տիկին ԶՎԱՐԹ ՍԵՖԵՐՅԱՆ, Խարթում։*

## ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

*Վեհափառ Հայրապետի 1957 թվականի նոյեմբերի 20 թվակիր սրբատառ կոնդակով,* գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի *միջնորդությամբ, վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրավունք շնորհվեց հոգեշնորհ Տ. ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ, Նյու-Յորքի հայոց Ս. Խաչ եկեղեցում երկարատև և ամբասիր սպասավորության համար։*

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

*Վեհափառ Հայրապետի հոկտեմբերի 5 թվակիր սրբատառ կոնդակով, Մայր Աթոռի լուսարարապետ* գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի *միջնորդությամբ, քահանայական լանջախաչ կրելու իրավունք է շնորհվել՝*

*Արժանապատիվ* Տ. ԽԱՉԱՏՈՒՐ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, *Փարաքար գյուղ.*

*Արժանապատիվ* Տ. ԽԱՉԻԿ ՔԱՀԱՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ, *Երևան։*

## ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ

*Վեհափառ Հայրապետի հոկտեմբերի 5 թվակիր նամակով,* գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի միջնորդությամբ, *արժանապատիվ* Տ. ԽԱՉԱՏՈՒՐ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, *Մոսկվա, շնորհվել է* ավագ քահանայության պատիվ:

*Մեր սրտագին շնորհավորությունները հայրապետական այս բարձր գնահատությունների արժանացողներին։*